№№ 5—6 ՄԱՅԻՍ ՅՈՒՆԻՍ 1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № 5—6

Աղբիւրի գրականական ալբոմ. † Պ. ԱՂԱՄԵԱՆ

Ուղեւոր (բանաստեղծութիւն) — Պ. Աղամեան.
Փոքրիկի յիշատակարանից (I. Մաս գնալը, II. Մարի տեսարանները) — *Ա. Մհերեան
Տիկնիկին (Էֆինէից) — Զ. Բարուղեան
Քրեդրիկ Դուգլաս (շար.) Թարգմ. — օր. Մ. Սերեբրեակեան
Անծրեւից առաջ (Նեկրասովից) — Ա. Ծատուրեան
Սեւ ամպեր — Ա. Օհան Չանեան

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

Ճապօնիա I. — օր. Ե. Եսայեան
_ (ոտանաւոր) — Ար. Յարութիւնեան
Վիլհելմ Թէլլ [Լամարթին] — Հ. Առաքելեան

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

Պ. Աղամեան

ԴԻՏՈՒԹԻՒՆ

Անծանօթ քարեկամներ եւ թշնամիներ — Ե. Զ.

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բուսաբան թղթուլ

ՓԻԱՐՃԱԼԻՔ

Համեղուկներ, խնդիր.
Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը:

Շարունակւում է ներկայ 1891 թ. ԱՂԲԻՒՐԻ եւ ՅԱՐԱԶԻ բաժանորդագրութիւնը:

—

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 35 կոպ. փոստի մարկաներ ունոր մանրամասն հասցէի հետ եւ հինը:

Այն բաժանորդները, որոնք դեռ չեն ստացել „ԱՂԲԻՒՐԻ“ Ա. պրէմիան Անառակ Որդին, (ապառնած լինելու պատճառով) անցեալ մայիսի 20-ին կրկին Փարիզից ստացւեց եւ հերթով ուղարկւեց հաստացողներին: Նրանք, որոնք մի որեւէ պատճառով դարձեալ չեն ստացել, թող մեր իրանց բաղաքի գործակալների միջոցով հաղորդեն մեզ, որ անյապաղ կուղարկւի: Շատերին ուղարկւեց դարձեալ մեր գործակալների միջոցով իրանց պարտքը:

—

Խնդրում՝ ենք, թէ ներկայ եւ թէ անցեալ տարիների մեր թերթերի բաժանորդագինը չը վճարողներին քարեհաճեն զէթ այժմ հասցնել մեզ:

Ա Ղ Բ Ի Ւ Ր

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ԵՒ

ՓԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԽՆԴԱԳՐԱՐԴ ՏԱՐԻ

№№ 5—6

ՄԱՅԻՍ—ՅՈՒՆԻՍ

ԹԻՓԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ
Գօլօվինսկի եւ Բարեպարհանսկի փողոցների անկիւնում.
1891

† Գ. Արտեան

Ո Ի Ռ Ե Ն Ի

Ա նման էր վշտերուս հետ
Լռի՛ր ո՛վ աղօտ ևատած մնտիկ,
Մեռելպաշտ ոտնձնոյզն տակ,
Որուն արտօսր է տերեսիկ:
Գլուխս առած ձեռքիդ մէջ
Կմխորհի՛ր, ևս իմ՛ աչաց
Յամ՛բեր արցունք, որ պատաւամ՛
Ի սրտերուն վիրաւորուած:
Գոնեա սիրտիս մի՛ էր ոտնձիր
Ինձ, որ իմ՛ տնոց լոռ արտասուէր,
Աչացս աչքօր կրէ պաշտօն,
Անշոշոյտ վաղն ալ՝ հիմիս է տոռնէր:

† Պ. ԱԴԱՄՅԱՆ



ՓՈՔՐԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

I

ՍԱՐ ԴՆԱԼԸ

Ին պիւղացիներին համար՝ որոնք ունին տաւար, ճի, հօտ՝ սար գնալը սովորական է։ Հէնց որ շոգերը սկսւում էին, պատրաստւում էինք տեղնում և սայլերը բեռնաւորած՝ ճանապարհ ընկնում։ Ուղիղ երեք օրից յետոյ հասնում էինք Ղարաղաչի սարերը։ Բոլորս էլ սար չէինք գնում, մի քանիսը միւում էին գիւղում այգիներին, տներին մոխիկ անելու և կալերը կալսելու համար։

Մեր տեղափոխւելու ժամանակը պտուղները հասած չէին լինում, բայց էլ համբերութիւն չունէինք, անհնար պլոկում էինք ծառերը, խակ խակ պտուղները վեր առնում, տանում։ Հովիտները տաւարը մեր առջևից

էին տանում. երեկոյեան և առաւօտեան կը-ում էինք մի ահագին բադիկ կամ և բրթելով հաց, տան քան մարդով խրպշտում էինք: Երկու ամբողջ օր անտառներով և խոր խոր ձորերով էինք անցնում, որոնց միջի ճանապարհները ահով և զարգանդով եմ յիշում մինչև այժմ: Յանկարծ այնպիսի ձորերով էինք անցնում, որ մարդ նայում էր շուրջը՝ սարսափը պատում էր սրտին: Ահագին մամռապատ ծառեր գերանաչափ ճիւղերով հասնում էին երկնքին: Երկինք բոլորովին չէր երևում: Երբեմն երբեմն ծառերի արանքով թռչկոտում էին վախկոտ եղնիկներ: Թռչունների ձայներ չէինք լսում, միայն հեռուից լսում էր ջրի վշշոցը, իսկ գետը մենք չէինք տեսնում:

Վախտ վախտ էլ սայլը սարերի կողերով էր անցնում. ճանապարհը նեղլիկ էր և վտանգաւոր. մի կողմը սարն էր, միւս կողմը շարաւած էին ծառեր: Երբ նայում էի այդ ծառերի միջով լեղիս պատռւում էր: Իմ առաջ ներկայանում էր մի անդնդախոր ձոր, որի միջից բարձրանում էին ահռելի կոճռուչ ծառեր, և այդ ձորի յատակում, ինչպես կարասի մէջ, դնգդնգալով դալարում

էր սրընթաց կապոյտ գետակը: Ինձ պատմում էին թէ երբեմն պատահում է որ ձանապարհից դուրս են սայլեր և ոչնչանում: Այդպիսի վտանգաւոր տեղերում մենք սայլերից վայր էինք գալիս ոտով գնում, բացի պառաւներից, որոնք չէին կարող ոտով գնալ: Եւ ինձ ցոյց էին տալիս թէ այս ինչ, այն ինչ ձորում սայլի հետ մի պառաւ է ոչնչացել:

Երկու օրից յետոյ ազատուելով անտառներից՝ հանդում էինք մերկ և խոտաւէտ լեռներին: Այդ լեռներից յետոյ էլ անտառներ չէին, այնպէս որ երբ այրելու փայտը վերջանում էր, երկու օրով սարերից գալիս էինք և այդ անտառներից փայտ տանում: Այդ լեռները պատկանում են Պրիվօլնի գիւղի ռուսներին: Մեզ չէին թոյլում անտառն ածխացնելու, որովհետև այդ տեղը նրանց արօտատեղիներն են: Բաւական առաջ գնալուց յետոյ, պատահում էինք իրարից հեռու մօտիկ գիւղերի, որոնց բնակիչները բոլորն էլ հայ-կաթոլիկներ են: Դրանցից մի քանիսը մեզ ծանօթ էին և պատուով էին ընդունում: Վերջապէս հինգ վեց վերստ գնալուց յետոյ հանդում էինք «Զղլի-Դիւզ» աւտած ընդարձակ տափարակին: Սա շատ խոտաւէտ

և հարթ դաշտ է։ Մենք գնում էինք գնում, վերջին չէինք հասնում։ Ջղի-Վիւղը թէև շատ խոտաւէտ և բնակութեան համար ընդարձակ է, բայց մենք այդտեղ չէինք վեր թողում մեր վրանները, որովհետև ջուրը համեղ չէ, ճահճային է. առհասարակ այդտեղ շատ անասուն ունեցողներն էին մնում։

—Մօտեցանք, մօտեցանք Ղարախաչին, սայլերը կանգնեցրէք, մինչև այնտեղ ոտով պէտք է գնանք, ասում էինք փոքրիկներս և սայլերից դուրս թռչելով, ընկնում էինք կանաչ գետնին և ծաղիկներից փնջեր կազմելով առաջ վազում։ Նայելով Ղարախաչի մատնախլապատ ասրերին՝ մեր սիրտը ծլունգ-ծլունգ էր անում։ Երեք-չորս վերստ ոտով էինք գնում, որպէս զի քանի կարելի է շուտով տեսնենք մեզ ծանօթ դաշտերը և խըմենք Գեօզ-Բուլաղի (Կապոյտ Աղբիւրի) համեղ և սուրբ-սուրբ ջուրը։ Վերջապէս հասնում ենք ցանկացած տեղը, սայլերը կանգնեցնում ենք ,,բարգ ու բարխանէն'' տեղաւորում։

Գալիս է բարակ անձրև. մարդուս սիրտը ցնծում է։ Վերցնում է գլխարկը, հանում է ոտնամանները և բոլիկ մնն է գա-

լիս շաղոտ խոտերի վրայ: Իւրաքանչիւրը ընտրում է իր համար դեռափ (վրանի) տեղ: Ձըկունն և բարակ ճողեր երկար և բոլորակ իբար մօտ անկելով՝ ծայրերը կորացնում ենք և իրար հետ կապոտում, դրան կողմը ազատ թողնելով: Յետոյ այս ճողերի ներքևի մասը շրջապատում ենք «չամիանով»: Սա եղէգնուց է թելով իրար հետ դեղեցիկ հիւսած: Մեր դեռափն ունէր միայն մի դերան ճողերի ներքև ամրացրած. դերանի երկու ծայրերը դըրւած էին խեչակ փայտերի վրայ, որոնք մեզ սիւնի տեղ էին ծառայում: Այսպէս պատրաստելուց յետոյ «կօկալը» շրջապատում էինք մեծ և հաստ քէչով: Որպէս զի ցուրտը ներս չը թափանցէ, չամիանը շրջապատում ենք զարդան անունով տերևաւոր տունկով: Դեռափի շուրջը առուներ էինք հանում, որ անձրևի ժամանակը քէչի ծայրերից կաթած ջուրը ներս չը գառնար: Այս ամենը պատրաստելուց յետոյ, տեղաւորում էինք անային առարկաները: Մեր դեռափքը սարի ստորոտումն էին մեր թողած «Կապոյտ Աղբիւրի» մօտ: Երեք ամսւայ մէջ մի քանի անգամ տեղափոխում էինք դեռափնոնց տեղը՝ աւելի խոտաւէտ տեղեր ընտրելով: Սարում շատ

ուրախ էր անց կենում օրը. կարագ իւղը, սերը, մածունը, կամիր ախորժակով վայելում էինք։ Շաբթէնը մի քանի անգամ խնոցի էինք հարում, մնքուր կարագ հանում։

II

ՍԱՐԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Շատ անգամ ընկերներով բարձրանում էի բարձր սարերի գագաթը։ Օրերը մեծ մասամբ միգապատ էին լինում։ Ահա երևում



են սարերի ստորոտներում և հովիտներում վրաններ, նրանց առաջ տաւարը։ Առաւօտւայ կիթն է. կիթում են կովերին։ Սրանցից քիչ հեռու ոչխարի հօտն է. կիթել են պրծել և սպասում են գառներին։ Ահա

երևացին սարի գլխին գառները. նրանք վա-
զում են իրանց մոր մօտ: Նրանց մայոցը
դրմբացնում է օդը և նրանց ձայները ծա-
ւալւում են հեռու և հեռու: Ահա արտու-
սը քաղցրիկ ճլվլոցով բարձրանում է դէպի
վեր և ինչ որ աղերսում է Աբարչին, և ա-
պա այնտեղից ցաւալի ձայնով գալիս է ու
կուրծքը զարնում է գետնին: Այս ու այն
կողմը արածում են ձիանոնց իլխաներ. նրանք
համարձակ պտոյտներ են անում ամեն կողմ:

Ահա երկու տուար մէկ մէկու հանդի-
պեցան. սրանցից ասպարէզ դուրս եկան եր-
կու ախոյեան—ցուլեր: Սարսափած հովիւնե-
րը ի զուր են չարչարւում նրանց միմեանց-
ից բաժանելու: Երկուսն էլ Ղարախաչում
գովւած և առաջնակարգ ցուլեր են: Նը-
րանց տեսքը ապշեցուցիչ է. մին քան զմիւ-
սը գեղեցիկ և հսկայ կազմւածք ունին:
Կարծես միանման երկուորեակներ լինին:
Նրանց ոտները, կուրծքը, պարանոցը սև և
կարճ մազերով են ծածկւած. մէջքներին
ձգւած է սևորակ և լայն շերտ: Ագիները
իրանց ծայրի ճոխ վինջերով գուրգուրում են
խոտերի չքնաղ կատարը: Եղջիւրները՝ ինչ-
պէս երկաթի հաստ մեխ՝ խփւած են նը-

բանց ճակատի մէջ։ Գլուխների խիտ խիտ մազերը մէկ մէկու միելով, կրկին կորացել են և մնել միմեանց արանք. նրանք «խիւ-ճիւճ» են իրրև գառան մորթի. իսկ պտիկ և խորամանկ աչերից մարդ սարսափում է։ Նրանց վրայ նայողը չի նկատիլ ոչ մի ցըցւած ոսկոր, ամբողջապէս կարծես ճարպի մէջ թաղւած լինին նրանց մարմնի մասերը։

—Դէհ, շտապեցէք, այ Հովիւներ, թէ չէ իրար կը կոտորեն, կանչում են ցուլատէրերը խրախուսելով Հովիւներին, որ մի կերպով հեռացնեն կատաղած ցուլերին։ Սակայն ամեհի ցուլերը բղըղալով, գետինը փորփորելով իրար մօտեցան, կողք կողքի կանգնելով՝ «կոթ արին»։ Դադանասիրներ էին, որ տրաքում էին ցուլերի ճակատներին. Հովիւների բոլոր ջանքերը ի զուր անցան։ Ցուլերը յանկարծ վրաւազեցին և ճակատ ճակատի դիպան։ Մի րոպէ նրանց ոտները մեխւեցան գետնի մէջ, ոչ մէկի ոյժը չէր յաղթահարում, բայց յետոյ սկսեցին իրար յետ մղել։ Ամբողջ մի ժամ նրանք կռւում էին. քրտինքը նրանց մարմնի վրայ փրփուրներ էր կազմել, նրանց մարմինը ապիտակել էր բոլորովին։ Դաշտի մէջը նրանց ոտներով

վարել էր, սև գոյն էր ստացել նրանց կռւելու տեղը: Հովիւները յոգնեցին դանա-հարելուց: Վերջապէս ցուլերը մէկ մէկու մղելով ընկան զառիվայրի վրայ. մէկը ցածի կողմն էր, միւսը օգուտ քաղելով այդ յար-մար դրութիւնից, ոյժը հաւաքեց և տարաւ նրան գլորեց փոսի մէջ: Հովիւների և ցու-լատէրերի մէջ կռիւ բացւեցաւ. դադանա-կով գլուխներ պատռւեցան:

Մինչդեռ նրանք այդ կռւով էին՝ յաղթա-ւած ցուլը ազատւելով փոսից, կատա-ղած վազում էր իր վրէժը լուծելու: Մարդիկ թողնելով իրանց կռիւը՝ հապճե-պով ազատեցին մեծահոգի ցուլին հանդարտեցնել...

Առաջնորդը պատեց այդ տեսարանը և ուրիշ տեսարաններ բացւեցան իմ առաջ: Նժդեհ արծիւը նստած ալոլիկ բարի գա-գաթին՝ իր սրատես աչքերով դիտում է շըր-ջական. նա արքայավայել գլուխը բարձրաց-նելով, վեհափառ կերպով ծղրտաց և նրա ձայնի արձագանքը անյայտացաւ հեռաւո-րութեան մէջ...

Ահա այստեղ և այնտեղ երևում են վրաններ. հանդիպակաց սարերի վրայ փրա-ւած է ոչխարի հօտը և մէկ հովիւ ինք-



նագոհ կերպով յենւել է դաղանակի վրայ, իսկ միւսը հնչում է շրւին, նրանց դամիհոն էլ հակում է հօտի չորս կողմը պտտելով։ Դար-ձեալ ձիհաններ, անճոռնի ուղտեր, տաւարք, որոնք շտապ շտապ արածում են դաշտե-

բում... Մէդը հակառակ կողմից դալով ծածկում է շրջակայն. ոչինչ չէ երևում, միայն մռռախուղի պատառները թափառում են դէս ու դէն. նրանք մանր կաթիլներով ցօղում են գետինը և ցցւում մեր երեսներին։ Գլուխս բարձրացնելով տեսնում էի ամպեր. ամեն կողմից շրջապատւած էինք ամպերով, միայն մեր ոտերն էին գետնին։

Այո՛, այո՛ սքանչելի է այս բոլորը, սրտա-գին տեսարաններ են սրանք, մանաւանդ շատ էի ուրախանում, երբ վաթսուն վերստ հե-ռաւորութիւնից երեւում էր Ալվարայ սա-րը, որը հսկայի նման անյողդողդ բարձրա-ցած է մինչև կէսը անտառապատ: Մեր գիւ-ղից նմանապէս երեւում էր նա, և ամեն ան-գամ նրան տեսնելիս՝ յիշում էի հայրենական խաղերը, այգիները ու դաշտերը...

Մենք ամեն բանից գոհ էինք, միայն մըր-զեղէնն էր, որից շատ զուրկ էինք, մինչդեռ գիւղում տանձը, խնձորը, թումբը փտում էին ուտողներ չունենալով: Թէև վախտ վախտ տա-նից մեզ համար մրգեղէն էին բերում, բայց դա էլ չէր գոհացնում շատ քիչ լինելով:

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ՝ գալիս էին գիւղում մնացածները բերելով ի-րանց հետ լծկաններին, որ համ իրանք հո-վանան սարում, համ խանձած անասունները վրագան և զովացնեն իրանց խաշլած սիրտը:

Սուրբ Աստուածածնի պասը պահելուց յետոյ՝ անում էինք մատաղներ և քոչում սարերից անկարագրելի ուրախութիւնով...

ԱՐՇԱԿ ՄԵՀՐԱԲԵԱՆ

ՏԻՆՆԻՆ

ՀԻՆԳԵՏԻՑ

Է, իմ տիկնիկ, դու իմ փոքրիկ,
Բաց աչերդ այդ նախշուն.
Սառըն, ինչպէս մարմար քարիկ.
Պիտի հլնես, փափկասուն.
Վարդի գոյնով քո լսպիտակ
Կըսըրսկեմ թշիկները,
Քեզ կըդնեմ արեւի տակ,
Դու կըբացես աչիկները:

Ջ. ԲԱԼՈՒՊԵԱՆ

ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՒԳԼԱՍ

Գ.

Ծանր էր Փրեդերիկին զրկել իր քարի տիկնոջ պաշտպանութիւնից. նա շատ տխրեց, լաց եղաւ, բայց չյուսահատուեց եւ իր սեփական ոյժերով շարունակեց ուսումը, աշխատելով հասնել իր նպատակին, որին չկարողացաւ հասնել իր նախկին վարժուհու օգնութեամբ: Փրեդերիկը գիտէր կարդալ, բայց չգիտէր ոչ գրել, ոչ հաշուել եւ այս երկուսն էլ ուզում էր անպատճառ սովորել: Երբ մարդ վճռում է ձեռք բերել մի բան եւ նա այդ գործին ընդունակ է, վաղ թէ ուշ կը հասնի իր նպատակին: Ունենալ սէր դէպի գործը, լինել աշխատասէր, տոկունութեամբ տանել ամեն դժւարութիւնները եւ անդադար դիմել դէպի իր նպատակը, չյուսահատուել անյաջող դէպքերում—ամեն մարդու միշտ կը հասցնէ այն նպատակին, որի իրագործումն նրել է իր միակ ցանկութիւնը: Փրեդերիկը ունէր այս բոլոր յատկութիւնները եւ այս պատճառով աւելորդ էր կասկածել, որ նա կամ հասնելու էր իր նպատակին կամ կործանելու էր նոյն նպատակի համար:

Առանց առաջնորդի նա կարողացաւ գրել սովորել: Հասկանալի է, որ այդ քանին հասնելու համար

հարկաւոր էր շատ եւ տակուն աշխատութիւն ու մտաւոր ընդունակութիւն: Փրեդերիկը հաւաքում էր գրած թղթէ կտորները եւ աշխատում էր կարդալ, եւ շուտով այս էլ յաջողուեց. նա ձեռագիրն էլ կարողանում էր կարդալ: Այժմ ինքը պէտք է աշխատէր գրել, բայց ի՞նչպէս անէր, քանի որ ոչ թուղթ ունէր, ոչ մատիտ, ոչ գրիչ, ոչ թանաք եւ անկարող էր նրանց ձեռք բերել: Եւ ահա Փրեդերիկը ածուխի եւ փայտի օգնութեամբ սկսեց տաւեղ խազմզել որտեղ պատահում էր պատերի վրայ, տախտակների վրայ եւ մինչեւ անգամ աւազի վրայ: Գործը դանդաղ էր ընթանում, որովհետեւ նա պարապում էր գաղտնի, որ ոչ ոք չիմանար. հակառակ դէպքում վտանգ էր սպառնում նրան: Ազատ միջոց նա շատ քիչ ունէր, այս պատճառով երբեմն գիշերներով էր պարապում: Բայց չնայած այսքան անյարմարութիւններին եւ արգելքներին՝ Փրեդերիկը վերջապէս սովորեց եւ գրելը:

Նա ուրախ էր եւ բախտաւոր, բայց անհանգիստ էր, որ չէր կարողանում մէկին պատմել իր յաւակնոտ երեւակայութեան մասին, չէր կարողանում մէկի հետ բաժանել իր ուրախութիւնը, ընդհակառակն, նա պէտք ծածկէր այս բոլորը, ինչպէս մի մեծ յանցանք:

Փրեդերիկը հրճուանքից դուրս կարդալ եւ գրել իմանալով, նա ցանկանում էր հաշիւ էլ սովորել: Այս գործը բոլորից դժուար էր. բայց չէ՞ որ ինքն էլ աւելի էր մեծացել եւ զարգացել, ուրեմն հեշտ էր յաղթել եւ այդ նոր դժուարութիւններին: Որտեղ համրելիս լինէին փող, բամբակի հակեր կամ մի ուրիշ բան, Փրեդերիկը անպատճառ այնտեղ էր գնում եւ ուշադրութեամբ լսում:

Բոլոր տեսածն ու լսածը միտն էր պահում, յե-

տոյ երբ հեռանում էր այնտեղից, սկսում էր մոռածել, քննադատել թէ ինչու այս ինչ բանը այսպէս պէտք է լինի եւ ոչ ուրիշ կերպ, եւ այդպիսով կազմեց իր համար մի կանոն, որ հաշուելով պէտք է կատարուէր: Նա իրան խնդիր էր առաջարկում՝ այնքան չարչարւում էր մինչեւ որ կարողանում էր լուծել: Դժւարութիւնները նրան չէին վհատեցնում, ընդհակառակն, քանի որ գործը դժւար էր լինում, այնքան աւելի ոյժ էր գործ դնում՝ եւ մինչեւ չէր վերջացնում գործը՝ չէր հանգստանում: Այսպիսով յաջողութիւն ունեցաւ եւ հաշիւ սովորեց: Ցայտնի բան է, նա չէր կարող իմանալ թւաբանական շատ գործողութիւնները՝ գումարումն, հանումն, բաժանումն եւ բազմապատկումը. այլ նա ամենն էլ անում՝ էր ընթանալի, բայց այնպէս՝ արագ, որ ուրիշը գրաւոր հաշուելով էլ չէր կարող:

Հաշիւը սովորելուց յետոյ՝ նա միեւնոյն ժամանակ շարունակում էր կարդալ-գրելը: Ամեն մի ծեռագիր կամ տպած թղթի նա վերցնում էր եւ ազատ ժամանակը կարդում, իսկ երբ պատահում էր լրագիր գտնել, նրա ուրախութեանը չափ չէր լինում, կարդում էր ծայրէ ի ծայր:

Դ.

Այսպիսի մշտական եւ անխոնջ աշխատութեամբ նա ութ տարի անցկացրաւ: Փրեդերիկը այդ ժամանակ 17 տարեկան պատանի էր: Նա պարապում էր առանց կողմնակի օգնութեան եւ նրա մտաւոր ընդունակութիւնը բաւական զարգացել էր: Ընթերցումն թէեւ հատուածական եւ անկանոն էր, բայց նրա գլխում զանազան մտքեր էին գոյանում: Նա միշտ մտածում՝ եւ աշխատում էր հասկանալ եւ բացատրել այն՝

ինչ որ տեսնում էր իր շուրջը. եւ որքան զարգանում էր նրա միտքը, այնքան աւելի եւս զօրանում էր շատ սովորելու ցանկութիւնը: Բայց ինչպէս գոհացնէր իր ցանկութիւնը, ինչ որ իրան հետաքրքրում էր: Ցայտնի բան է, որ այսպիսի ցանկութիւն եւ մտաւոր զարգացում ունեցող Փրեդերիկը չէր նմանւում քթամիտ տգէտ գերիներին, որոնք իրանց տէրերի կարծիքով ոչ այլ ինչ էին, եթէ ոչ աշխատող կենդանիներ: Նրա հայեացքը խելօք էր, մտախոհ: իսկ աչքերը արտայայտում էին իրան սիրտը ալեկոծող մտքերը: Նրա հպարտակ խօսակցութիւնն էլ զանազանւում էր միւսներից: Փրեդերիկը խօսակցութեան ժամանակ միշտ յայտնում էր իր ղժգոհութիւնը շրջապատող մարդկանց կեանքի թըշուառ վիճակի մասին: Այս յատկութիւններով չէր կարելի Փրեդերիկին իսկական գերի կոչել, որովհետեւ իսկական գերին նա է, ով որ սովորութիւն չունի մի քանի վրայ խորհելու, ում միտքը զարգացած չէ, ով աւելի նմանւում է անբան կենդանուն: Եթէ մարդս ունի մտածելու ընդունակութիւն, եթէ ծնւում է նրա ուղեղի մէջ մի միտք կամ ցանկութիւն քացի ուտելուց, այդպիսի մարդը չի կարող իսկական գերի կոչւել: Մէկ մտքին հետեւում է միւսը. մէկ ցանկութիւնը ծնւում է եւ ուրիշ տանեաւոր ցանկութիւններ եւ այդպիսով գերին շուտով հասկանում է ստրկութեան բոլոր ստորութիւնը եւ անարդարութիւնը: Եւ այդպիսով նա կաշխատի դուրս գալ այդ ստրկութիւնից եւ լինել ազատ, ինչպէս ամեն մարդ ազատ է:

Ինչպէս Փրեդերիկի տէրը, նոյնպէս եւ նրա օգնականները նկատում էին, որ այս պատանին միւս գերիների նման չէ եւ համարում էին նրան կասկածաւոր գերի, որի հետ անհրաժեշտ էր խիստ վարուել.

ալէտք էր ոչնչացնել այն ապստամբական եւ երկիւղալի մտքերը, որ ծնեալ էին նրա գլխում: Փրեդերիկի տէրը ի հարկէ ինքն էլ կարող էր այս բոլորի առաջն առնել, որովհետեւ Փրեդերիկը գտնւում էր իր լիակատար իշխանութեան ներքոյ եւ կարող էր այնպէս վարուել նրա հետ, ինչպէս իր „քէֆը կուզէր“, բայց նրան խանգարում էր իր կնոջ պաշտպանութիւնը. այս պատճառով նա վճռեց ուրիշ միջոց գործ ղնել, իր կարծիքով, Փրեդերիկին ուղղելու համար:

Փրեդերիկի տէրին կօվէյ անունով մի մարդ կար հարեւան, որ նոյնպէս գերիներ էր պահում եւ որը հրաւիրած էր ուղղելու այնպիսի գերիներին, որոնց գլխում կրծազէր ազատութեան միտքը: Փրեդերիկն էլ արժանացաւ նրա իշխանութեան տակ մտնելու: Փրեդերիկի տէրը յանձնեց նրան կօվէյին գաղտնի իր կնոջից, այնպէս որ պատանու պաշտպանուհին չէր իմանում որ իր սիրելին գտնւում է ուրիշի մօտ:

Կեանքի այսպիսի փոփոխութիւնը շատ զգալի էր Փրեդերիկի համար: Առաջուայ տիրոջ մօտ կեանքը բաւականին տանելի էր. իսկ կօվէյն ամենեւին գութ չունէր: Եթէ նա խիստ էր վարւում իր գերիների հետ, ուրեմն ուրիշն խիստ պէտք է վարուէր այն գերիների հետ, որոնք իրանց տիրոջ „կասկածաւոր“ թւելով ուրիշի իշխանութեան տակ էին դրւում նրան ուղղելու: Առաջին օրից Փրեդերիկին տուին ամենածանր գործերը կատարելու: Գերիների հսկողը միշտ իր հետ մանը էր ածում մտրակ, որից Փրեդերիկի մարմնի վրայ կապտագոյն շերտեր էին գոյացել իր մի փոքր անզգուշութեան համար: Կարդալ ու գրել անհնար էր, որովհետեւ ամբողջ օրը մի րոպէ հանգստութիւն չունէին, իսկ գիշերները Փրեդերիկին փակում էին մութ անկեանում՝ եւ միշտ նրա վրայ առանձին հսկողու-

թիւն ունէին, այնպէս որ նրա ոչ մի վարմունքը չէր կարող անսպասելի մնալ: Երեւում է որ Փրեդերիկը պէտք է յուսահատուէր եւ միայն խոնարհուէր իր ճակատագրին, քայց նա չէր յուսահատւում եւ չէր էլ խոնարհւում, այլ նրա ատելութիւնը Կօվէյի եւ առհասարակ բոլոր գերիների պահապանների դէմ օրէցօր շատանում էր:

Ը.

Մէկ անգամ Փրեդերիկը աշխատում էր միւս գերիներից առանձին, երբ Կօվէյն մօտեցաւ, նրա աշխատանքից անբաւական լինելով եւ յանդուգն պատասխան առանալով, ուզում էր Փրեդերիկին ծեծել:

—Մի խփէք, բղաւեց Փրեդերիկը,—եթէ դուք ինձ խփէք, ես էլ կը խփեմ:

Այս խօսքերը այնպէս նեղացրեց Կօվէյին, նա կարծես սատիկ հարւածից ուշաթափւած, քարացած մնաց իր տեղը: Ի՜նչ զարմանք, իր գերին համարձակւում էր իրան հակառակւել. համարձակւում էր ապառնալ իրան դէմ, որ եթէ ինքը խփէր, միեւնոյնը նա կանէր. սա մի հզօր եւ հզաւած քան էր. սա մի անմիտ եւ յիմար երազ էր թւում նրան:

—Ի՞նչ ասացիր, վերջապէս արտասանեց Կօվէյն հազիւ իրան զսպելով:

Փրեդերիկը կրկնեց իր խօսքերը:

—Դու՛ ինձ կը խփե՞ս, բղաւեց Կօվէյն եւ կատաղաբար յարձակւեցաւ երիտասարդի վրայ:

Գերիի եւ իր տիրոջ մէջ կռիւ սկսւեց. քայց Փրեդերիկը շատ ուժեղ եւ առոյգ լինելով, շուտով յաղթեց իր հակառակորդին: Կօվէյն ընկած էր գետնի վրայ եւ ահ ու դողով սպասում էր, որ ահա կատա-

ղած գերին կրկին մի յարձակում գործելով, կըսպանէ իրան:

Փրեդերիկը զգւանքով նայում էր գետնին տարածւած Կօվէյի վրայ եւ նրա մէջ ծագեց րոպէական ցանկութիւն սպանել այդ անգութ մարդուն:

—Խղճա՛ ինձ, մի՛ սպանիլ, աղաչում էր Կօվէյն:

—Պէտք է քեզ սպանել, պատասխանեց Փրեդերիկը,—գոնէ մէկ չարագործ կը պակսի աշխարհիցս:

—Էլ առաջւայ պէս խիստ չեմ լինի, եւ կըվարւեմ ձեզ հետ այնպէս, ինչպէս իմ որդու հետ, ասում էր Կօվէյն երկիւղով:

—Ես գիտեմ, որ դու խաբում ես, քայց այնուամենայնիւ չեմ սպանիլ, որովհետեւ չեմ ուզում մարդասպան լինել. չեմ ուզում սպականել ձեռներս քեզ նման չար մարդու արիւնով:

Կօվէյն ուրախացաւ եւ ուզում էր վեր կենալ գետնից:

—Չէ, սպասի՛ր, ասաց Փրեդերիկը,—ես քեզ այսպէս շուտ չեմ թողնիլ: Ես լաւ գիտեմ, որ եթէ իմ ձեռից ազատւես թէ չէ՝ ինձ աշխարհքի վրայ չես թողնիլ:

Եւ ուղիղ, Կօվէյն գետնի վրայ ընկած, նրա ասածն արդէն մոռացել էր:

Փրեդերիկին լաւ յայտնի էր թէ այդ դէպքից յետոյ որպիսի վիճակ էր սպասում իրան. եւ այդ պատճառով նա ամեն աշխատանք գործ դրեց ազատել իրան սպառնող մահից. նա կապեց Կօվէյի բերանը, որ չըկարողանայ բղաւել, կապեց նոյնպէս ձեռներն ու ոտքերը եւ գցեց աւելի հետու, որ նրան շուտով չըգտնեն:

—Դէ՛հ. այժմ մնաս բարով, վերջ, ասեց Փրեդերիկը.—Այսուհետեւ գուցէ ազատւեմ քո ձեռքից:

Այս ասելով Փրեդերիկը փախաւ. նա գիտէր որ Կօվէյն հէնց կազատուի թէ չէ, իսկոյն իր մարդոցս շները կուղարկէ փախստականի յետեւից, որոնք որտեղ գտնեն իրան, կըպաւոտտուեն: Այս պատճառով առանց ժամանակ կորցնելու՝ պէտք է օգուտ քաղէր այն րոպէներից, մինչեւ Կօվէյն այդ կարգադրութիւնն էր արել:

Փրեդերիկը վազում էր քոլոր ոյժով. նա հասպում էր հասնել գետին, որի միջով լողալով կարող էր անցնել միւս ափը եւ այսպիսով շները կըկորցնէին իր հետքը:

Թարգ. օր. Մ. ՍԵՐԵԲՐԱԿԵԱՆ

(Վերջը միւս անգամ)

ԱՆՁՐԵՒԻՑ ԱՌԱՋ

(Նեկրասովից)

Երկնի վրայ ամպ է կիտում
Տխուր, լալկան ցուրտ քամին,
Մութ անտառն է խուլ շշնջում,
Հեծում կոտրած եղեւնին:

Եւ տերեւներ սուտ խմորով
Դէպի գետն են սրընանում.
Ամեն կողմից սուր հոսանքով
Ցուրտն է փչում, հառաչում:

Մութ է պատել ամենուրեք,
Մութ տատրակի, տխրաբեր
Ճիչ են քառնում խեղճ, անարեւ
Օդում ճախրող ագռաւներ. : .

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՍԵՒ ԱՄՊԵՐ

Ս.

ան, Չան, այսօր պէտք է գընանք քամբակի արտը քաղհանելու, ասում էին Օհանէս ապօր աղջկերքը միմեանց եւ ուրախ ուրախ երգիչով աշխատում էին տան գործը վերջացնել։ Որը կովերն ու ոչխարներն է կթում, որը սառը աղբիւրից ջուր է բերում եւ ամբողջ բակը ջրըջրհանում, սրբում ու մաքրում, որը լաւաշ շարմաղ հացը թրջում փափկացնում կամ կանաչու սալէն ճեռքին, մարգերի գլխին պըպզած՝ բողկ, կոտիմ, ռեհան ու սոխ է քաղում... Գիւղնազ նանն էլ, Օհանէս ապօր կինը, մէկ կողմից այս ու այն կողմն ընկած կարգադրում, հրամաններ է տալիս աղջկերանցը, մի կողմից կաթ է տաքացնում, պանիր եւ մածուն մերելու, կամ ճու եւ ճուկն է խաշում հետները քամբակի արտը տանելու. միայն Օհանէս ապերը չէ երեւում՝ սրանց մէջ. նա կարգադրելով տղերքին կովերն ու հոլթերը նախիրը տանելու, եւ գոմն ու անասունների բակը սրբելու, քաշւել է բակի մէկ անկիւնը եւ պատի տակ նստած՝ թաղուշականներին կոթ է գցում եւ կարգի բերում։

—Այ կնիկ, հըպրծնք, օրը ճաշ դառաւ, էլ երբ հասնենք արտը, ասաց Օհանէս ապերը վերջացնելով իր գործը։

—Պրծել ենք, պրծել... աղջկերը, շուտ արէք պատրաստուեցէք, մինչեւ ես էլ հացը կապեմ, ասաց Գիւլնազ նանը եւ մոտաւ հացատուն:

—Դէ տղէրը, շուտ արէք, սէլը լծէք, պատւիրեց Օհանէս ապէրը եւ ինքն էլ մի կողմից սկսեց օգնել տղէրանց:

Երբ ամեն ինչ պատրաստուեցին, մեծ ու փոքր միասին նստեցին երկու սկնաների սայլի վրայ եւ ճանապարհ ընկան դէպի քամբակի արտը:

Գարնանային պարզ եւ զեղեցիկ առաւօտ էր: Նորածին արեգակը դեռ նոր էր դուրս եկել իր գիշերային հանգստից եւ հազիւ կարողացել էր իր կենսատու ճառագայթները տարածել Մասիսի ձիւնապատ գագաթին: Արարատեան ընդարձակ դաշտը իր կանաչ արտերով, հոտաւէտ ծաղիկներով եւ պտղատու ծառերով այնպիսի մի զեղեցիկ պատկեր էր ներկայացնում, այնչափ կեանք, բարութիւն եւ առատութիւն էր խոստանում, որ ոչ թէ միայն քրտնաջան երկրագործի սիրտն էր թնդում ուրախութիւնից, այլ եւ արբազան Մասիսը, որ մի քանի ամիս առաջ մռայլ ղէմքով, մութ եւ սեւ ամպերով պատած, լալիս էր եւ արտասւում, այժմ քաղցր ժպիտը երեսին, կապուտակ երկնակամարով շրջապատած, իր կրտսեր եղբայր Արագածի հետ միասին, կարծես ժպտում էին բնութեան զեղեցկութեան վրայ...

Օհանէս ագէրը սայլի վրայ նստած, նայում էր իր հորս կողմն եւ անհուն բերկրանք էր զգում, երբ տեսնում էր՝ մէկ կողմում ոչխարների եւ գառների հօտերը, միւս կողմում՝ կովերի ու հորթերի նախիրները, ցրուած քշքշան աղբիւրներով շրջապատած արօտատեղիների վրայ, արածում են բնութեան պարգեւած կանաչ եւ հիւթալի խոտը: Գեղջկուհիներն էլ ցրուած կանաչ արտերի մէջ՝ սիքեղ, ծնեփուկ եւ ուրիշ բանջարեղէն էին քաղում եւ կարծես ուզում էին բնութեան հրաշալի տեսարանը աւելի եւս զեղեցկացնել իրանց կարմիրագոյն շորերով եւ քաղցրաձայն երգերով: Սրանց ձայնակցում էին եւ Օհանէս ագօր տղերքը, որ սայլի վրայ նստած երգերով եզներին արագ քշում էին, որ եւ իրանց ճանապարհը կարճացնեն:

Դէս ժամից յետոյ Օհանէս ագօր ընտանիքը, երբ

հասաւ քամբակի արտը, վայր եկաւ ապէից եւ ամեն մէկը, վերցնելով իր թագուշակը, մտաւ քամբակի արտը քաղհան անելու:

Բ.

Արեգակը բարձրացել էլ եւ արդէն անցել էր օրւայ կէս ճանապարհը: Բայց Օհանէս ապօր ընտանիքը ոչ հանգստանալ էր ուզում եւ ոչ էլ քաղցածութիւն էր զգում: Նրանք բոլորն էլ ուրախ ուրախ երգելով աշխատում էին արտի մէջ:

Ճանկարծ հիւսիսի կողմից բարձրացաւ մի կտոր սեւ ամպ եւ փոքր առ փոքր լայնանալով, սկսեց տարածուել կապուտակ երկնակամարի վրայ:

—Երեւում է, պէտք է լաւ անձրեւ գայ, ասացին Օհանէս ապօր աղջիկները:

—Հիմիկւայ անձրեւը օգուտ է, ինչքան ուզում է թող գայ, միայն ես վախում եմ կարկուտից, նկատեց Գիւլնազ նանը:

—Դեռ ոչինչ վտանգ չկայ, հանգիստ սրտով ասաց Օհանէս ապէրը, նայելով Մասիսի գագաթին:

—Ինչ ես իմանում, հայր, հարցրին Օհանէս ապօր տղէրքը:

—Տեսնում էք, սիրելի որդիք, թէ ինչպէս սեւ ամպերը ուզում են մօտենալ Մասիսին, բայց նա քամու զօրութեամբ հեռացնում է իրանից եւ քշում է հետս: Եթէ սեւ ամպերը չը յաղթեն Մասիսին եւ թողնեն նրան կրկին կապուտակ երկնակամարով զարդարւած, իմացէք որ կարկուտ կամ վնասակար անձրեւ չի գալ երբէք. իսկ եթէ սեւ ամպերը յաղթեն Մասիսին եւ պատեն նրա գագաթը, այն ժամանակ միայն վախեցէք.. Թէեւ այս բանին շատ չէրն են հաւատում, բայց սա մեր պապերից մնացած դարերի ընթացքում փորձած մի ճշմարտութիւն է—մի

նշան, որ պատուհանից առաջ որոշում՝ է մեզ սպասող վտանգը...

—Հայրիկ, ո՞ւր է Մասիսը... վախեցած գոչեցին բոլորը միաբերան:

Օձանէս ապէրը նայեց. ուղիղ որ Մասիսը չէր երեւում: Սեւ ամպերը, որպէս սեւակոինչ ագռաւները պատերազմի դաշտում՝ ընկած դիւցազնի անշնչացած դիակի վրայ, այնպէս էին կուտակւել նրա գլխին: Ու մինչեռ բոլորը շւարած կանգնած էին, յանկարծ երկինքը որոտաց եւ ամպերի գոռում՝ գոչումը խառնւելով փայլակ-կայծակի հետ, ամբողջ երկիրը դղրդացրեց եւ խեղճ երկրագործի սիրտն ահ ու դողով լցրեց: Մի րոպէ եւս, եւ անծրեւ ու կարկուտը, պատերազմի դաշտում՝ տեղացող հրացանի գնդակների պէս, թափւում՝ էին երկնքից... Ոչխարները, գառները, կովերը եւ հորթերը, քառաչելով, այս ու այն կողմն էին վազվզում՝ իրանց համար ապաստան գտնելու. թռչունները եւ վայրենի գազանները իրանց ըներն էին քաշւել. մարդիկ սայլերի եւ քարերի տակ էին պաշտպանւում՝. միայն կանաչ արտերն եւ նոր պտուղ բռնած այգիներն էին, որ քաջ եւ արտուտ տղամարդի պէս, հրվանենալով կարկուտի հարւածներից եւ կարծես ոչինչ համարելով երկնքի բարկութիւնը, համարձակ կանգնել էին կարկուտի հարւածների տակ եւ գլուխները խոնարհած ղէպի գետին, անհամբեր սպասում՝էին այն րոպէին, երբ իրանց յաղթութիւնով ամբողջ երկիրը պէտք է ուրախութեամբ եւ ցնծութեամբ լցնէին: Կարկուտը անխնայաբար խփում՝ էր խեղճերի գլխին, բայց քնութեան պարգեւած քարութիւնը չէր ընկճում՝ ամպերի հարութեան տակ: Արտերը եւ մարգագետինները իրանց նոր կանաչ եւ դալար բոյսերով պարկել էին փափուկ հողի վրայ, որ

որպէս հարազատ մայր, գրկել եւ պաշտպանում՝ էր նրանց... Իսկ այգիների պտղատու ծառերը, կարծես նոր ոյժ ստացած, քարձրացրել էին իրանց կանաչ տերեւները, որոնք իրանց թեւերի տակ պաշտպանելով դեռ եւս կանաչ պտուղներին, իրանք կոտորւում՝ էին, ծակծկւում՝ էին, բայց թոյլ չէին տալիս մատղաշ պտուղներին շատ վնասւելու։Անցաւ մի քանի րոպէ եւս: Եւ մինչդեռ Օհանէս ապէրը, իր ընտանիքի հետ միասին չոքած սայլի տակ, արտասուալի աչքերով զթութիւն եւ ողորմածութիւն էր խընդրում՝ Աստծուց, յանկարծ ծեր Մասիսը իր բոլոր ոյժը ժողովեց, հալածեց սեւ ամպերին հեռու, շատ հեռու... Երկինքը կրկին պարզվեց, արեգակը ազատւեց իր կապանքից, Արարատեան դաշտը—քնութեան պարգեւած այդ գեղեցկութիւնը, կրկին քարձրացրեց իր գլուխը եւ քաղցր ժպիտը երեսին խնդաց նախանձոտ ամպերի հարութեան վրայ...

Ա. ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՃԱՊՈՆԻԱ

I

ԵՐ նաև հետզհետէ մօտենում էր այդ նկարչական և հետաքրքրքիր երկրին։ Մենք մօտենում էինք ծովափնեայ Նագազաքի քաղաքին, որը գտնւում է Կիւզիւ կղզու հիւսիս-արևմտեան կողմը։ Եղանակը հրաշալի էր, երկնքի վրայ ոչ մի ամպ չրկար և արեգակը շիկացած, անշարժ կանգնել էր երկնակամարի մութ կապտագոյն ֆոնի վրայ. այնուամենայնիւ տաք չէր. թեթև հիւսիսային քամին քնքոյշ կերպով զգւում էր և թոյլ չէր տալիս, որ արևը այրէր։ Սյսպիսի եղանակը ստիպում էր աւելի անհամբեր լինել, մարդ ուզում էր, որքան կարելի է շուտով անցնել այն ջուրը, որ բաժանում էր մեր նաւը Հոքիգօնի վրայ հազիւ նկատւող երկրից։ Բայց ահա այդ երկիրը սկսում էր հետզհետէ թանձրանալ և պարզ ու որոշ կերպով տեսնւել փարոսը։ Մեր առջև ելևւաց գեղեցիկ Ճապոնիան։

Մենք արդէն անցել էինք այն փարոսի կողքից, որ գեղարւեստական կերպով կանգնած էր մի բարձր սարի վրան՝ խիտ կանանչի մէջ։ Բոլորովին մօտիկ անցանք ջը-

ըից դուրս ցցուած ժայռերից, որոնք ծածկւած էին կաղնիներով և ուղիղ պատի պէս դուրս էին պարզւում ըրից։ Ասում են, որ շատ առաջ ճապոնացիները այդ ժայռերից էին ջուրը նետում իրանց ատելի եզուիտներին։

Ճապոնիան Սիբիրի հարևան մի երկիր է, որ ճիշտ գտնւում է Ուսուրիան երկրի դէմ ու դէմ և բաժանւած է նրանից մի մեծ ծովով, որը կոչւում է Ճապոնական ծով։ Ճապոնացիների ամբողջ տէրութիւնը բաղկացած է ահագին քանակութեամբ մանր ու մեծ կղզիներից, որոնց հաշւում են մինչև 3800։ Հիւսիսային կողմից առաջին մեծ կղզին կոչւում է Եզո կամ ինչպէս ճապոնացիները ուրիշ տեսակ կոչում են—Մացմա։ Այդ կղզին գտնւում է Սախալին կղզու Հարաւային կողմը. միւս մեծ կղզին ամենամեծն է և նրա մէջ գտնւում են ճապոնիայի երկու մայրաքաղաքները. հինը՝ Կիօտօ, և նորը՝ Տօօկիօ։ Այս կղզին աշխարհագրութեան մէջ կոչւում է *Հոնդօ*, բայց այդ ճիշտ չի, որովհետև իրանք ճապոնացիները նրան կոչում են Նիպօն, որից և ծագում է ամբողջ տէրութեան անունը։ Իրանց մայրաքաղաքն էլ ճապոնացիները երբեմն կոչում են *Հոնդօ*։ Նիպօ կղզուն հետևում է Սիկօկօ կղզին. յետոյ Կիուզիու կղզին և վերջապէս մանր կղզիների խմբեր, որոնց կոչում են Լիու-Կիու։

Բոլոր այս կղզիները իրանց բարձրավանդակներով Ֆրանսիայի $\frac{1}{8}$ մեծութեան չեն հասնում։ Ամբողջ ճապոնիան ունի 40,000,000 բնակիչ։

Ճապոնիան հրաբղխային կազմութիւն ունի. երկրի $\frac{2}{3}$ մասը սարեր են. ժայռոտ եզերքներից յայտնւում է, որ շատ առաջ երկրաշարժներ են եղել այդ կողմերում և կարծես թէ Սախալից պոկւելով մեծ հողակոյտեր, կտրտւել են մանր մասերի և ցրւել են ովկիանոսի մէջ։

Ձապոնիայի ամենամեծ սարը կոչւում է Ֆուչի-եամա (եամա Ճապոներէն նշանակում է սար). նրա բարձրութիւնը համարեա 3 վերստ է. ամբողջ Սրշիպելագոսը որոշւում է ծովային հոսանքներով. Սրևելեան կողմից տաք՝ Սրևմուտքից՝ ցուրտ: Ձապոնացիները հաւատում են որ կըգայ այն ժամը, երբ այդ հոսանքները կուլ կըտան և երկրիս երեսից կ'ոչնչացնեն Ձապոնիան. այսպիսի լեռնային երկրում է հարկ է չի կարող պատահել մեծ գետեր: Նրանք հոսում են ձորերի խորքերում, որտեղից գնում են դէպի ծով. կամ թէ չէ չորանում են ամառւայ ընթացքում, թողնելով ընդարձակ տեղ, աւազ և քարեր: Մինչև իսկ քիչ կան այնպիսի գետեր, որոնց վրայ կարելի լինի նաւարկել մեծ նաւակներով:

Ձապոնիայում շուտ շուտ երկրաշարժ է պատահում, մինչին թիւով ամսական 100 անգամ պատահում է. դեռ լաւ է, որ վերջին անգամներս նրանք շատ ուժով չեն. պատահել է, որ երկրաշարժից քանդւել են ամբողջ քաղաքներ. օրինակ՝ 1854 թւին Տօօգին մայրաքաղաքում սաստիկ երկրաշարժից մեռան 100,000 մարդիկ: Ձապոնիան հարուստ է տմեն տեսակ հանքերով ու մետաղներով. այնտեղ կայ գրանիտ, մարմարիոն, թանգագին քարեր, ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ և այլն և այլն. ինչ վերաբերում է բուսականութեան, կարծես թէ այստեղ են հաւաքել աշխարհիս բոլոր բոյսերը: Հիւսիսային կողմում աճում են տխուր եղևնիներ և կաղնիներ, բայց հարաւային կողմում հասնում են դեղձ, անանաս և նարինջ:

Թէև Աստուած տւել է Ճապոնիային բուսական և հանքային հարստութիւն, բայց նա տւել է նրան շատ քիչ կենդանիներ, նրանց թիւը կարելի է մատով հաշւել: Վայրենի կենդանիներն են՝ արջ, գայլ, աղւէս, կզաքիս, այծ և կապիկները—ահա բոլորը: Միջատներ նոյն-

պես քիչ կան, բայց կան մարդու զզւեցնող մժղուկները (москиты)։ Ոիշատիչ թռչուններից կան՝ արծիւ, բազէ, կաչաղակ և վերջապէս ագռաւները. վերջիններից ահագին քանակութեամբ կան։ Երգող թռչունները շատ քիչ կան, բայց կռունկները, արագիլները և այլն անհամար են, իսկ ծովային թռչուններն այնքան շատ են, որ հաշուել չի կարելի։

Ընտանի կենդանիներից կան. կով, ձի, ոչխար, և և այլն. բերում են Չինաստանից, առաջ դրանցից բոլորովին չկար։ Զարմանալին այն է, որ ճապոնացիները, եւրոպացիների գալուց առաջ բոլորովին միս չէին ուտում. առ հասարակ իրանք չէին կարողանում օգուտ քաղել ընտանի կենդանիներից այնպէս, ինչպէս որ մենք ենք կարողանում։ Օրինակ. ճապոնացիները չեն իմանում ինչպէս գործածել ոչխարի բուրդը, նրանց մէջ բրգեղէն գործուած բոլորովին չըկայ։ Ճապոնացիները եշ չեն տեսել, բայց ձին ինչպէս մի օգտակար անասուն՝ նրանք բանացնում են խնայողութեամբ։ Ընտանի անասուններից ճապոնիայում կայ՝ խոզ, հնդկահաւ, բադ, սագ, և հաւ։ Հաւը մերինների նման չէ, աւելի փոքր է, կարծես վառիկ լինի և չափազանց կարճ ոտներ ունի, կարծես թէ սողում է և ոչ թէ մարդ գալիս։

Մէջին-ճապոնիայում, այսինքն Նիպան անունով ամենամեծ կղզու վրայ, կլիման բարեխառն է և շատ ախորժելի, 6 աստիճանից աւելի ցրտութիւն չի լինում։ Նոյեմբերի կէսից մինչև յունուարը արևը փայլում է զարմանալի պարզ և ախորժելի զովութեան մէջ, որ մարդ հազիւ տաքանում է։ Այս երկրի ամենագեղեցիկ եղանակներն են ձմեռը և աշունը։ Ով որ այդ հրաշալի օրերը կանցկացնի այս կողմերում, նա կրտանի իր հետ շատ լաւ տպաւորութիւն։

Բայց ահա անցնում է ձմեռը և գալիս է գարունը

և մենք բոլորս ուրախ ենք։ Այնան անդադար անձրևներ է լինում, որ տևում է երեք, չորս և մինչև իսկ 8 օր անդադար. երկինքը երկար ժամանակ ծածկւում է մութ ամպերով և ի զուր կըսպասէք, որ արևը տեսնէ։ Քաղաքացիները չեն սիրում այդպիսի եղանակ և սպասում են մինչև որ գան լաւ եղանակները, իսկ ընդհակառակն, գիւղացիները-Ճապոնիայի գլխաւոր աշխատաւորները՝ գոհ են այդպիսի եղանակներից. նրանք օրհնում են այդպիսի տխուր և խոնաւ անձրևային օրերը, առանց այդ անձրևների կըչորանան նրանց բրնձի արտերը և այն ժամանակ քաղցած կը մնային ոչ թէ միայն իրանք, այլ և ամբողջ տէրութիւնը։

Երբ սկսւում է ամառը, սկսւում են նոյնպէս սաստիկ խեղդող և խոնաւ շոգեր։ Արևը այրում է սաստիկ և ըսկըսում է հողից ծծել բոլոր անձրևներից գոյացած խոնաւութիւնը, և մարդ այնպէս է լինում, որ կարծես թէ բաղնիքի մէջ է։

Վերջապէս Ճապոնիայի փոփոխական օդի նկարագրութիւնը կատարեալ անելու համար, պիտի լիշել նաև փոթորիկները. նրանց կարելի է կոչել համարձակ Ճապոնիայի մարակներ։ Համարեա թէ ամեն տարի այս սոսկալի քամին յայտնւում է երկրի երբեմն այս և երբեմն միւս կողմերը և համարեա ոչնչացնում է իր անցած տեղերը։

Ուրագանները (փոթորիկները) այս կողմում կազմւում են *մուսօնների* (մի տեսակ քամի է) փոփոխութեան ժամանակ, օդային երկու հոսանքների միմեանց հանդիպելուց։ Ահա ինչպիսի եղանակի մէջ են ծնւել և սնւել Ճապոնացիները. գտնուելով այդպիսի ախորժելի և երջանիկ երկնքի տակ, Ճապոնիան պէտք էր աւելի երկրագործ լինէր, քան հովիւ ժողովուրդ։ Սղմւած լինելով մեծ լեռների մէջ՝ նրանք աւելի շուտով պէտք է լինէին երկրագործ ժողովուրդ։

Ուտելու յարմար եղող կենդանիների բացակայութիւնը, ստիպել է նրանց կիրակուր փնտրել ծովում և դրա համար էլ նրանք դարձել են շատ ճարտար ձկնորսներ։

Ճապոնիայի աշխարհագրական կտրուած դրութիւնը և կեանքի համար պէտք եղած բոլոր պէտքերի հարբուտութիւնը, արեցին այն՝ որ ճապոնացիները վարել են փակուած կեանք, ապրել են բոլորովին անկախ երկար դարեր և դրա համար էլ երբ եւրոպացիներն առաջին անգամ ոտ կոխեցին այդ տերութեան մէջ, ապշած մնացին իրանց շրջապատող բոլոր բաներից։ Ամեն ինչ ցոյց էր տալիս, որ չկայ այնպիսի մի բան, որ բոլորովին նման լինէր եւրոպականին. ամեն ինչ բոլորովին ուրիշ տեսակ էր և ինքնուրոյն։

ՕՐ. ԵՂԻՍ. ԵՍԱՅԵԱՆ

(Կը շարունակուի)

* * *



ըխուր է հոգիս. քիւրատոր վըշտեր
Տանջում են նրան անհուն տանջանքով,
Ով ազնիւ երգիչ, երգիր ինձ երգեր,
Որ իմ հոգեզ սիրտը քորքոջի նըրանցով:

Եւ թող քո երգը լինի խիստ տըխուր,
Թող նա ինձ պատմէ ցաւերն թշուառի.
Թող առաջացնէ սրտիս մէջ վատ հուր,
Թող կորզէ ինձնից ծով արցունքների:

Ունիմ ես դեռ ոյժ վիշտըս կըրելու,
Եւ ինձ մոռնալով մի խեղճ ուրիշին
Պատրաստ եմ հոգով միշտ կարեկցելու,
Անգամ զոհելու ինձնից թշուառին...

ԱՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ

ՎԻԼՀԵԼՄ ԹԷԼԼ

XI

Տեսարանը ներկայացնում է մի մարգագետին, Ալտորֆ գիւղի մօտ։ Մարգագետնի մէջ տեղ բարձրանում է ձողը, որի գլխին դրուած է կառավարչի պէշլխարկը, Գեսլէրի աղեղնաւորները չրջապատում են ձողը։ Ալտորֆի և չրջակայքի ժողովուրդը այստեղ այնտեղ ցրուած է խմբերով մարգագետնի չուրջը։ Ալպերի ձիւնապատ չղթան բարձրանում է խորքում, վճիտ երկնակամարի տակ իբրև մի յանդիմանութիւն ուղղուած բնութեան կողմից բռնապետութեան, որ կամենում է չղթայել ազատ հողը։

Պահապանները ցած ձայնով խօսում են իրար հետ։

ՔՈՒՀՀԱՐԴ ԵՒ ԼԵՕՏՕԼԴ

մտնելով պահականոցը

Քուհհարդ։ Չուր տեղ սպասում ենք. ոչ ոք չի գայ անցնելու այստեղից և գլխարկին իր յարգանքը մատուցանելու։ Առաջ այնքան բազմութիւն կար այստեղ, որ կարծես տօնավաճառ էր, բայց այնօրից, որ այս ձողից կախ է տւած այս հողմահարը, մարդ ագեաին չի մօտեցել է։

Լեօտօլդ։ Միայն թշւառ արարածները են գալիս այստեղ և հանում իրանց պատառոտած գլխարկները. բայց

բոլոր պարկեշտ մարդիկ աւելի սիրում են մի երկար պատմ անել, քան թէ գլխարկի առաջ խոնարհել։

Փոխհարդ։ Պէտք էր, որ կէսօրին, քաղաքային տնից դուրս գալիս, անցնէին այս հրապարակով։ Կարծում էի որ ահա մի լաւ որս պիտի անեմ, որովհետև ոչ ոք չէր մտածում երկրպագել գլխարկին։ Քահանան որ վերադառնում էր այդ միջոցին, նըկատեց այդ բանը և ճիշտ այս ձողի տակ ծունկ չոքեց ս. Հաղորդութիւնը ձեռքին բռնած, դպիրը հնչեցրաւ զանգակը, բոլորը ծունր դրին, ես էլ նրանց հետ. բայց նրանք երկրպագում էին սուրբ Հաղորդութեան և ոչ գլխարկին։

Հետաքրք։ Լսիր, ընկեր, ինձ թւում է, որ մենք իրրև մի անուր ենք այս գլխարկի առաջ։ Որքան որ լինի, սակայն ամօթ է մի գինուորականի համար մի դատարկ գլխարկի պահպանութիւնն անել, և ամեն պարկեշտ մարդ պէտք է արհամարհէ մեզ։ Երկրըպագել մի գլխարկի, պէտք է խոստովանել որ մի օտարոտի երևակայութիւն է։

Փոխհարդ։ Ինչո՞ւ չերկրպագել մի գլխարկի, քանի որ երկրպագում ես դատարկ ուղեղների։ (*Հիլդեբարդը, Մաթիլդը, Եղիսաբէթը հասնում են իրանց երեխաների հետ և պտտում են ձողի շուրջը*)։

Հետաքրք։ Ինչ եռանդուն ստահակ ես. սիրտդ ուզում է երևի այս բարի մարդկանց վատութիւն անել։ Գալով ինձ, թող ով ուզում է գլուխ տայ այս գլխարկին, աչքերս փակում եմ և իբր ոչինչ չեմ տեսնում։

Մաթիլդ։ Ձաւակներս, այս կառավարչի գլխարկն է, յարգանք մատուցէք։

Եղիսաբէթ։ Ատուած տար որ հեռանար մեզանից միայն իր գլխարկն թողնելով մեզ։ Կարծեմ գործերն հիմիկւանից աւելի վատ չէին ընթանայ մեր երկրի մէջ։

Քոհանալող (*քշելով նրանց*). Կորէք, ողորմելի կին-արաբածներ, այստեղ դուք պէտք չէք. ուղարկեցէք ձեր մարդերին, տեսնենք քաջութիւն կունենան արհամարհելու մեր նշանը։ (*Կանայք դուրս են գալիս, Թէլլն առաջ է գալիս իր աղեղի հետ, իր երեխայի ձեռքից բռնած. նրանք անցնում են գլխարկի առաջից առանց նրան տեսնելու*)։

Վալտէր ցոյց տալով Բանբէրգի սարը. Հայրիկ, ճշմարի՞տ է որ այդ սարի վրայի ծառերը արիւնոտում են, երբ նրանց կացնով խփում են։

Թէլլ. Այդ քեզ ո՛վ ասաց, զաւակս։

Վալտէր. Մեր Հովիւն ասաց, նա պատմում է, որ այդ ծառերի մէջ կախարդներ կան և երբ մի մարդ նրան վնաս է հասցնում, նրա ձեռքը իր մահից յետ գերեզմանից դուրս է գալիս։

Թէլլ. Այդ ծառերը նւիրական են, ճշմարիտ է։ Տեսնում ես, ներքևում այն բարձր սպիտակ սարերը, որոնց գագաթը կարծես կորչում է երկնքի մէջ։

Վալտէր. Այդ սառցակոյտներն են, որոնք թնդում են գիշերը իբրև որոտում և որտեղից ընկնում են ձիւնաշեղջերը։

Թէլլ. Այո՛, զաւակս, և այդ ձիւնաշեղջերը վաղուց կուլ տւած կըլինէին Ալտօրֆ գիւղաքաղաքը, եթէ վերևում գտնուղ անտառը հաւատարիմ պաշտպանի նման չըպաշտպաներ նրան։

Վալտէր՝ մի վայրկեան մտածելուց յետոյ. Հայրիկ, կա՞ն այնպիսի երկիրներ, որտեղ լեռները չեն տեսնըւում։

Թէլլ. Երբ իջնենք մեր սարերից և հետզհետէ ցած գընանք մեր գետերի հոսանքին հետևելով, կըհասնենք մի բաց, ընդարձակ երկրի, որտեղ հեղեղները այլ ևս չեն փրփրում, որտեղ գետերը հոսում են ծանր

և խաղաղ։ Այնտեղ, ամեն կողմում ցորենը մեծանում է անհուն դաշտերի մէջ և երկիրն այգու պէս է։

Վալտէր. Ուրեմն, Հայրիկ, ինչո՞ւ չենք իջնում և գնում այդ գեղեցիկ երկիրը, փոխանակ այստեղ նեղութիւնով ապրելու։

Թէլլ. Այդ երկիրը լաւ է և գեղեցիկ իրըև երկինքը, բայց սրա բնակիչները չեն վայելում իրանց սերմանած հունձը։

Վալտէր. Մթթէ նրանք քեզ նման ազատ չեն իրանց ժառանգութեան մէջ։

Թէլլ. Նրանց դաշտերը պատկանում են եպիսկոպոսին կամ թագաւորին։

Վալտէր. Բայց չէ՞ որ կարող են որսորդութիւն անել անտառներում։

Թէլլ. Որսը և թռչունները պատկանում են աղաներին։

Վալտէր. Այն ժամանակ կարող են որսալ գետերի մէջ։

Թէլլ. Գետերը, ծովը, աղը պատկանում են թագաւորին։

Վալտէր. Ուրեմն ով է այդ թագաւորը, որից ամենքը վախենում են։

Թէլլ. Նա մի մարդ է, որ պաշտպանում է ամենքին և կերակրում։

Վալտէր. Այդ մարդիկ չեն կարող իրանք իրանց պաշտպանել։

Թէլլ. Այնտեղ զրայինն չի համարձակում վստահիլ իր զրացուն։

Վալտէր. Հայրիկ, մի այդպիսի երկրում ինձ համար վատ կանցնէր. աւելի լաւ է ձիւնակոյտերի տակ մնամ։

Թէլլ. Այո՛, զաւակս, աւելի լաւ է ձիւնակոյտերի մօտ լինել քան չար մարդկանց մօտ (կամենում են շաշարունակել իրանց ճանապարհը)։

Վալտէր. Հայրիկ, տես այն ձորի վրայ տնկած գլխարկը։

Թէլլ. Մեզ ինչ։ Եկ, հետևիր ինձ։ (Հեռանալիս, Ֆրիս-հարդ առաջանում է իր նիզակով)։

Փոխհ. Կայսեր անունով, կանգնեցէք, այլ ևս հեռու մի գնաք։

Թէլլ. զոնելով նիզակը. Ի՞նչ էք ուզում, ինչու էք կանգնեցնում ինձ։

Հևծօղը. Դուք չէք երկրպագել այս գլխարկին։

Փրիհարդ. Դուք անհնազանդ էք գտնվել հրամանին, հետևեցէք ինձ։

Թէլլ. Բարեկամս, թող անցնենք։

Փոխհ. Դէ շո՛ւտ, շո՛ւտ, դէպի բանտ։

Վալտէր. Իմ հայրս դէպի բանտ։ Օգնութի՛ւն, օգնութի՛ւն։ (Վազում են տեսարանի վրայ)։ Այստեղ, բարի մարդի՛կ, օգնեցէք մեզ, աջակցի՛ք մեզ։ (Տանում են Թէլլին դէպի բանտ. քահանան, դպիրը և ուրիշ երեք բնակիչ վազ են տալիս)։

Դպիրը. Ի՞նչ կայ։

Քահանան. Ինչո՞ւ ես բանտարկել այդ մարդին։

Փոխհ. Սա կայսեր թշնամին է, սա դաւաճան է։

Թէլլ. կոշտութեամբ խափանարելով նրան։ Ե՛ս, մի դաւաճա՞ն։

Քահանան. Սխալւում ես, բարեկամս, այդ Թէլլն է, մի պատուաւոր մարդ, մի բարի քաղաքացի։

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Կը շարունակուի)

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ

Ներկայ յունիսի 3-ին հայ գեղարուեստական գրական հորիզոնից մի շատ փայլուն աստղ, կատարեալ մի արեգ մարեց ետ հանգաւ: Այդ օրը հայ գեղարուեստական-գրական աշխարհը կորցրեց իր նշանաւոր ներկայացուցչին

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՆԾԱՆՕԹ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ԵՒ ԹՇՆԱՄԻՆԵՐ



Այսպէս է, որ կենդանիները չեն կարող ապրել առանց բոյսերի։ Եթէ մի որ ևիցէ մսակեր գազան, օրինակ՝ վագրը, ապրում է կենդանիների մսով և ամենևին կարօտութիւն չունի ոչ բոյսի, ոչ խոտի և ոչ պտուղների,—ուստի այն վարազները, կամ այծերը, որոնցով կերակրւում է վագրը, ապրում են խոտերով և պտուղներով, ապա ուրեմն և ինքը վագրը, կողմնակի կերպով՝ անունդ է ստանում այդ բոյսերից։ Միւս կողմից՝ բոյսերն էլ օգտւում են շատ անգամ կենդանիներից։ Այսպէս, օրինակ, շատ տեսակ թռուիների և խոտերի ծաղիկները բեղմնաւորւում են լոկ միջատների օգնութեամբ։ Մեղուն, կամ թիթեռը, անցնելով մէկ ծաղկից միւսի վրայ՝ քաղցրահամ կերակուր ժողովելու նպատակաւ, միևնոյն ժամանակ նա իր ոտները և կնճիթը թաթախո մ է ծաղկի բեղմնաւորիչ փոշու մէջ, և այդ փոշին իր հետ անդիտակցաբար տանում է նոյն ցեղին պատկանող բոյսի իգական ծաղիկների վրայ, թափում է այնտեղ փոշին և այդպիսով ծաղիկը բեղմնաւորւում, զարգանում, պտուղ է տալիս։ Միջատներին իրանց վրայ գրաւելու համար՝ շատ բոյսեր զարդարւում են դունաւոր և խոշոր ծաղիկներով։ Շատ անգամ՝ բոյսերի և կենդանիների փոխադարձ յարաբերութիւնը այնքան բարդ և խճճւած է լինում, որ դժւար է հեշտութեամբ ըմբռնել և հասկանալ։ Առաջին անգամից որ նայում ես՝ կարծես թէ ոչ մի ընդհանուր բան չի երևում և չի կարող լինել մի բոյսի և փոքրիկ կենդանու, կամ գազանի մէջ։ Բայց որ մօտիկից, ու-

չադրութեամբ դիտում և ծանօթանում ես նրանց հետ,—դուրս է գալիս, որ նրանք, կամ չատ մօտիկ բարեկամներ են, կամ թէ չէ՝ ոխերիմ թշնամիներ։ Օրինակ՝ թէկ ընդհանուր բան կարող է լինել՝ տան կատուի և դաշտում բուսած առւոյտի (եօնջայի) մէջ։ Ըստ երևոյթին՝ ոչինչ։ Կատուն առւոյտն և ոչ մի բոյս չի ուտում, իսկ առւոյտն էլ իսօ ոչ մի դործ չունի կատուի հետ։ Բայց իսկապէս՝ մեր «փիսոնները» առւոյտի ամենամեծ բարերարներն են,—այնպիսի բարերարներ, որ առանց նրանց՝ այդ բոյսը կարող է ոչնչանալ անդամ։ Եւ ահա թէ՝ ինչպիսի բարդ ճանապարհով կատուները, բոլորովին անդիտակցաբար, ծառայութիւն են անում՝ իրանց համար անծանօթ բոյսին։ Առւոյտի ծաղիկները բեղմնաւորւում են միայն իշամեղու կոչուղ միջատների օդնութեամբ։ Այդ իշամեղուների բոյները ուտում են դաշտային մկները, իսկ մկներին իսօ, ինչպէս յայտնի է, մեծ բաւականութեամբ որսում են կատուները։ Եթէ առւոյտ ցանած դաշտից հեռացնենք կատուն, այն ժամանակ՝ մկները այդտեղ սաստիկ կըբազմանան, կըոչնչացնեն իշամեղուներին և դրանից էլ՝ առւոյտի ծաղիկները կըմնան ամուլ. չեն բեղմնաւորուիլ, սերմ չեն տայ, և միւս տարւայ համար՝ ցանելու ոչինչ չի լինի։ Դարձեալ մի ուրիշ օրինակ. այծերը, ինչպէս գիտէք, ոչ մի յարաբերութիւն չունին մանր թռչունների հետ, և երբէք չեն կարող ոչնչացնել նրանց։ Սակայն եղել է այնպիսի դէպք, երբ այծերը ոչնչացրել են թռչուններին։ Ս. Հելինէ կղզու վրայ՝ սկզբում, դեռ նոր գտնուած ժամանակ՝ եղել են մի տեսակ մանր թռչնակներ, որոնք ապրել են ծառերի, թփերի մէջ։ Երբ եւրոպացիք առաջին անդամ՝ այդ կղզու վրայ սկսել են այծեր պահել,—դալար կանաչի այդ սիրահարները չարունակ ուտելով ու կրծոտելով կանաչ տերևները, վերջապէս բոլորովին անհետացրել են կղզու վրայից՝ թուփերը և ծառերը։ Այդ պատճառով էլ կղզու վերտուր բնակիչները բոլորովին չքացել են այդ տեղից՝ չունենալով իրանց համար՝ բնակուելու որ և է ապաստան։ Ներկայումս այնտեղ ոչ մի տեղական թռչուն չըկայ, բացի փոքրիկ եղերաբնակ կտցարներից և ուրիշ թռչնակներից, որոնք արհեստական կերպով բերած և չատացրած է այտեղ։

Ե. Ղ.

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՐՈՒՍԱՀԱՆ-ԹՐԹՈՒՐ

Ցայսմհետ կրցուելիւն է, որ շատ մի՛ջատները՝ կրանց կեբակրի ձեռք բերելու վերաբերմամբ զարմանալու չափ հնարագէտ են։ Դրանց մի-քանիսն անպատճառ կերակրըւում են միայն մի տեսակի բոյսով, և ամենևին չեն ուտում որևէ ուրիշ տեսակի բոյս։ Այսպէս օրինակ՝ բզեզների մի տեսակը—Cetonia aurata, միայն վարդենի վրայ է ապրում, այնպէս որ ուր որ այդ ծաղիկից չըկայ, այնտեղ չի լինել նաև այդ բզեզից։ Agrynniz ասւած Թիթեռի Թրթուրը բոլորովին անկարող է գոյութիւն ունենալ առանց մանիշակի, և ամենևին բերանը ուրիշ բոյս չի առնիլ. այդպէս է նաև Satyridae ասւած գերդաստանին պատկանող զանազան Թիթեռների Թրթուրները, որոնք բացի հասակաւոր բոյսերից, էլ ուրիշ ոչինչ չեն ուտում, Թէկուզ սոված սատկելիս լինին։

Այդ վերը առաջ բերածների նմաններից մինը—Thiridia-ի Թրթուրը բուսաբանութեան մասին այնպիսի հմտութիւն երևան հանեց, որ իր այդ հմտութիւնով շատ գիտնական մարդկանց ամաչցրեց։ Այդ Thiridia-ն անսովոր հակումն ունի դէպի մորմազգի բոյսերը։ Նա միայն այդ ընտանիքին վերաբերեալ զանազան բոյսերով է կերակրւում, բայց անպատճառ մորմազգի բոյսեր պիտի լինին։ Սակայն ըստ երեւոյթի դա կարծես խարուելիւն չի պնում մորմազգի բոյսերի և Brunfelsia-ի մէջ, որ բուսաբանների կարծիքով ուրիշ ընտանիքի է պատկանում, այն է լոզատանձ ասւած բոյսի. և Thiridia Թրթուրը այդ լոզատանձը էս ուտում է այնպէս ախորժակով, որ կարծես մորմազգի բոյս լինի ուտելիս։

Բայց բանից դուրս եկաւ, որ երբ Բէնտամ և Հուկէր բուսաբանները վորձեցին աւելի մօտից հետազօտել այդ Brunfelsia-ն, տեսան որ Թրթուրը նրանից էլ մատծել բացատրելիւն անել։ Այդ գիտնականները համոզւել են, որ բուսաբանները սխալմամբ էին Brunfelsia-ն և մորմազգի բոյսերը տարբեր տեսակի վերագրում, այն ինչ իսկապէս դրանք էլ, այսինքն Brunfelsia-ները մորմազգի բոյսերի տեսակին են պատկանում, որին այդպէս սիրում է Thiridia Թրթուրը, որ ասել է Թէ դա գիտնական բուսաբաններից աւելի առաջ գիտէը, Թէ ինչ բոյս է Brunfelsia-ն։

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Առաջ. Մակար Տէր-Սարգսեանի

Մի քաո գիտեմ—երկվանկանի
Հինգ տառերից կազմուած ունի.
Բաղաձայնով սկսւում, բաղաձայնով վերջանում:
Թէ մէկ գիրը սկզբից. միւսը վերջից
Կարես, դէն ձգես՝
Գործել քայի հրամայականը կըգտնես,
Թէ սկզբինը իր տեղը թողնես՝
Վերջինը քաց թողնես՝
Ուրիշ մի քայի անցեալ կատարեալը կըտեսնես,
Թէ նրան կից ձայնաւորն էլ դէն ձգես՝
Նոյն քայի հրամայականը կըլսես:
Իսկ թէ սկզբինը դու չնչես՝
Հայի պատմական գետի եւ մի հայ հանդէսի
Անուն կըյիշես:
Կամ թէ ուզես մէջ ընդ մէջ կարդալ՝
Միտքդ կըգայ Հայաստանի մի գաւառ:
Հէնց որ ուզեցիր շիտակ դու կարդալ՝
Երբէք պէտք չի քեզ սար ու ձոր մանգալ.
Ամէն մի շաքաթ աչքիդ առաջն է
Կամուրջի գլխին փառաւոր քազմած,
Ցետեւը սիրուն ձիւնապատ սարեր՝
Աչ եւ ձախ կողմում մէկ-մէկ տիկիններ:

Նախընթաց №-ի հանելուկների բացատրութիւնը

9, 8, 7, 6, 5, 4, 3, 2, 1 = 45
1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 = 45

8, 6, 4, 1, 9, 7, 5, 3, 2 = 45

1. **Կան-թեղ։** 2. **Գրելը։** 3. **Քամի։**

Խմբ.-Հրատ. Տիգրան Նազարեան

Доз. Ценз. Тифлисъ, 8 іюня 1891 г.

Тип. „Ararat“ Т. Я. Назарьянъ. уголъ Гол. пр. и Бар. уг.

Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑԻ
ԹԱԹ – ՍԱԲԱ
(Հայ բոշաների կեանքից)
Գինն է 15 կոպ.
Վաճառւում է Թիֆլիզի գրավաճառները մօտ և „Մուրճի“ խմբագրատանը

Լոյս տեսաւ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՏՈՒՐԵԱՆի
„ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ“
Գինն է 50 կոպեկ
Ճանապարհածախսով 60 կոպեկ: Յանձնարարեցէք դիմումներ հետևեալ հասցէով. Москва, Газетный пер. д. Лианозова, въ типографію М. Бархуда ріазъ.

Լ Է Օ
ԳԱԻԹ և ՄԱՀԵՐ
Ժողովրդական վէպի քննադատութիւն
Վաճառւում է „Աղբիւրի“ գրասեն. և Թիֆլիսի գրավաճառների մօտ:
Գինը 15 կոպ.

Մի պատասխանատու ընտանիք կամենում է իր մօտ պահել դիշերօթիկ մանուկներ՝ աշակերտներ կամ աշակերտուհիներ: Ընտանիքի զաւակները՝ դուստրը եւ որդին, որոնք ուսանում են գիմնազիաներում, առաջինը 8-րդ, իսկ երկրորդ 6-րդ դասարաններում, կարող են պատրաստել աշակերտներին ուսումնարանների տարին դասատնեբի համար, նմանապէս պարապել նրանց հետ եւ հայոց լեզուից: Հասցէն հարցնել „Մշակի“ եւ „Աղբիւրի“ խմբագրատանը: 3—3

ԳԵՂԱՓԻՐ ԱՒՕՄ
Մի գեղեցիկ գործ եւ ամեն հայ ընտանիքի հիւրասենեակի զարդ
Լոյս կըտեսնի կարճ ժամանակում
Աշխատասիրութիւն
ՏԻԿՈՆ ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆի
Բաժանորդագինը 1 րուբ 50 կոպ.
Ալբոմի լոյս տեսնելուց 2 ր. փառակազմ 3.
Բաժանորդագրութիւնը ընդունում է „Աղբիւրի և Տարազի“ խմբագրութիւնը:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ՀԱՆՐԱՄԱՏՋԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆԻ
ԱՌԱՋԻՆ ՏՆՏՐԱԿԸ: Բովանդակութիւն: Ադդ.—Յառաջաբան.— Միկրօբների ընդհանուր տեսութիւնը.— Դէզինֆեկցիական միջոցներ և նրանց գործածութեան եղանակը. — Սրընթաց վարակիչ կարմրախտներ: 1, Ռուբէչ Скарлатина 2, Կարմրուկ. Корь 3, Ծաղիկ (Оспа) 4, Ծաղկի պատուաստումը (Оспопрививаніе). 5, Չրծաղիկ вѣтряная оспа 6, Ռուբէչ, Կարմրուկ ու ծաղիկ հիւանդութիւնների գլխաւոր որոշիչ յատկութիւնները 7, Կարմիր քամի Рожа . 6, Բծաւոր տիֆ Сыпной тифъ.

„Հանրամատչելի բժշկարանը“ կըհրատարակւի երկու հատորով, իւրաքանչիւր հատորը բաղկացած կըլինի 22—23 տպագրական թերթից. (44 տող իւրաքանչիւր երեսում $6\frac{1}{2}$ կվադրատ տողերի երկայնութիւնը № 10 տառերով):

Բաժանորդագրութիւնը չարունակւում է. 45 թերթից 720 երեսից բաղկացած երկու հատորի գինը ե ր ե ք րուբլի է. մեր բաժանորդները հրատարակութիւնը կըստանան մաս մաս 5—8 թերթ. իւրաքանչիւր տետրակում: Ա. տետրակի գինը 70 կ. ամեն տետր:

Մեր հասցէն. Въ гор. Тифлисъ, Доктору Медицины Григорію Никитичу Теръ-Григорьянцъ, Саперная улица № 7.

Բժշկապետ Գրիգոր Տէր-Գրիգորեանց (Թիֆլիսեցի)

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է 1891Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՏԱՐԱԶ

Ամսիւրի յաւելուած

Գեղարուեստ.—գրական-երգիծար.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հայ անդաստանում՝ ցանել գեղեցկի եւ բարոյ սերմեր ու արմնատիպիլ անել ազգ եւ հայր որոմն, ահա Տարազի նպատակը:

ԴԵՂԱՐՒԵՍՏ՝ լինի նա արտայայտուած քանաստեղծի վառ երեւակայութեամբ, նրաշագործ նկարչի վրձինով, թէ սիրտ արտիպացնող վիպագրի զբաղով Տարազում առաջին տեղը պիտի բռնէ: Քննադատութիւն մեր առօրեայ կեանքի՝ լինի նա արտայայտուած վէպով, պատմածով, Փէլիետոնով. թէ կատակով Տարազի գրական մասը պիտի կազմէ:

Տարազի մի երրորդական մասը կը կազմեն պատկերներ, նկարներ, տեսարաններ, թէ արդի եւ թէ անցած գնացած, գլխաւորապէս մեր կեանքից:

ՏԱՐԱԶԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարուեստ եւ գիտութիւն. Պատմական եւ ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական զրուածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն եւ կենսագրութիւն: Կար, ձկւ, ծնուազործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն եւ մեսուրիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Նրաժշտութիւն եւ թատրոն: Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուածներ եւ այլն: Փէլիետոն ծաղր, առած, կատակ: Շախմաթի եւ այլ խաղեր, ռեբուս, հարցեր, խորհուրդներ: Այլեւայլ, պատասխաններ, յայտարարութիւններ:

ՏԱՐԱԶ պատկերազարդ շաբաթաթերթերի տարեկան բաժանորդագինը 6 րուբլի է, արտասահմանի համար 7 ր. (20 ֆր.) առանձին №№ 25 կ.

Հասցէն՝ Тифлисъ, ред. ил.юст. еженед. жур. „Таразъ“ կամ՝ Tiflis (Caucase) Rédaction du journal „Taraz“.

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Միամեայ հրատարակութիւն նկարների եւ դատարկների համար:

Աղբիւրի առաջին պրեմիան է մի եղեգիկ օշոգրաֆիա ԱՆԱՌԱԿ ՈՐԴՈՒ ոգ պրոմոգնեղիաց

Աղբիւրի Բ. պրեմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ պ. Գեղոգ Բաշինջաղեանի ԱԼԱԶԱՆի ՀՈՎԻՏը մեծադիր եւ շքեղ ձիթանկարը վիմակ կրգդու բաժանորդների մէջ մեզ մերտեմբեր կամ հոկտեմբեր ամսին.

Աղբիւրի Գ. պրեմիան գալ 1892 թ. համար դիմորեների №-ի հետ կոդարկի մի պատկեր-տախտակ եւ մի գլուխի փորթրեդիր օրագոյց: Բայի դրանցից, տարեայ ընդհատ կատարեալ հանդեսներ, ներքոյ ներ ո-րոնցից ստացիլ ընդունողները կրատանան մրցանակներ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) *Վէպեր, վիպակներ, զրոյցներ, առակներ, ներքինիներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ.*

II) *Բանաստեղծութիւններ.*

III) *Գիտութիւն եւ արուեստ.*

VI) *Հետաքրքիր տեղեկութիւններ*

V) *Այլ եւ այլք.*

ՉՈՐՐՈՐԴ

VI) *Մանկական, փիլիսիլեան, շախմաթի եւ այլ խաղեր, ներքոնաներ, Թուարանական խնդիրներ: Անկիւրուներ, հանելուկներ՝ շուռասանկուկներ.*

VII) *Երգեր՝ նօտաներով.*

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) *Կրթութիւն եւ դաստիարակութիւն վերաբերեալ յօդուածներ ու տեղեկութիւններ.*

IX) *Առաջարկութիւններ-խորհուրդներ*

X) *Մատենախօսութիւն եւ նոր գրքեր.*

XI) *Խառն դրեր.*

Պատասխանաներ. Յայտարարութիւններ.

Աղբիւրի տարեկան բաժանորդագինը 3 ր. 28 կ. իսկ արտասահմանի համար ալէմիաներով 4 ր.

Հասցէն՝ Тифлисъ, ред. Агбюръ կամ՝ Tiflis [Caucase] Rédaction du journal AGBUR

Խմբագիր-հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ